**Արձանագրություն N 2**

***2024 թվականի Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի***

ք. Երևան «12» «Դեկտեմբերի» 2023թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Ընդունել ի գիտություն, որ 07.11.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 12:00-ին: 2023 թվականի նոյեմբերի 22-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Էֆ.Հոֆֆման-Լա Ռոշ» ԷլԹիԴի | *sargsyan@am.am* | *144939* |
| 2 | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | *tender@theopharma.am* | *00471216* |
| 3 | «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ | *tender@mlnpharm.am* | *02567316* |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ «Մ.Լ.Ն. Ֆարմ» և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների և«Էֆ.Հոֆֆման-Լա Ռոշ» ԷլԹիԴի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Առաջին տեղը զբաղեցրած բոլոր մասնակիցների կողմից առաջարկված ապրանքները՝ դեղերը չունեն պետական գրանցում և քանի որ սույն գնման ընթացակարգի և պայմանագրերի կատարման

ընթացքում կիրառվում են ՀՀ Կառավարության 2013 թվականի մայիսի 02-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման պահանջները, ուստի համաձայն նշված որոշման 2.2 կետի՝ բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ, չգրանցված դեղերի համար պարտադիր պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջազգային մասնագիտական կազմակերպություն սահմանելու մասին» N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին: Տեղեկանքը ներկայացնելուց հետո, պայմանագրերը կնքելուց վերջիններումս կներառվեն այն դեղերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *4. Մասնակիցների առաջարկած գների մասին*

---

***(Հ. Մնացականյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 21.11.2023թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին*

---

***(Հ. Մնացականյան)***

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *6. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին*

---

***(Հ. Մնացականյան)***

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1. «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 2, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով:
2. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն՝ 1-ին չափաբաժնի մասով:
3. «Էֆ.Հոֆֆման-Լա Ռոշ» ԷյԹիԴի-ն՝ 6-րդ չափաբաժնի մասով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *7. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

***(Հ. Մնացականյան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

**Որոշվեց.**

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝
   - «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 2, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, 634,815,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով.
   - «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն՝ 1-ին չափաբաժնի մասով, 192,651,264 ՀՀ դրամ պայմանագրային գումարով.
   - «Էֆ.Հոֆֆման-Լա Ռոշ» ԷլԹիԴի-ն՝ 6-րդ չափաբաժնի մասով, 1,392,768 ԱՄՆ դոլար և 560,811,9625.88 ՀՀ դրամ պայմանագրային գումարով: Համաձայն հրավերի պահանջների պայմանագրի գինը կֆիքսվի ՀՀ դրամով՝ հրավերի մեջ ԿԲ-ի կողմից հաստատված փոխարժեքին համարժեք՝ 1$=402,66 ՀՀ դրամ, կազմելով 560,811,962.88 ՀՀ դրամ:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով:
3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 3-րդ չափաբաժնի մասով՝ ոչ մի հայտ չի ներկայացվել: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 13.12.2023թ.-ից մինչև 22.12.2023թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------------------- Մ. Հարությունյան

---------------------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Սարգսյան

2024 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի (ցրված սկլերոզ) վերաբերյալ վերջնական գներով

| NN | Դեղի անվանումը | Քանակ | «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ | | | | | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Ինտերֆերոն բետա 1a 44 մկգ | 3,120 | 160,542,720 | 32,108,544 | 192,651,264 | 51,456.00 | 61,747.20 | 162,215,040 | 32,443,008 | 194,658,048 | 51,992.00 | 62,390.40 |
| 2 | Ինտերֆերոն բետա 1b 0,3 մգ | 3,120 | | | 0.00 | 0.00 | 0.00 | 150,000,000 | 30,000,000 | 180,000,000 | 48,076.92 | 57,692.31 |
| 3 | Ինտերֆերոն բետա 1a 30 մկգ | 1,040 | | | 0 | 0.00 | 0.00 | | | 0.0 | 0.00 | 0.00 |
| 4 | Դիմեթիլֆումարատ 240 մգ | 43,200 | | | 0 | 0.00 | 0.00 | 108,000,000 | 21,600,000.0 | 129,600,000.0 | 2,500.00 | 3,000.00 |
| 5 | Գլատիրամեր ացետատ 40 մգ | 10,950 | | | 0 | 0.00 | 0.00 | 271,012,500 | 54,202,500.0 | 325,215,000.0 | 24,750.00 | 29,700.00 |
| 6 | Օկրելիզումաբ 30մգ/մլ | 480 | | | 0 | 0.00 | 0.00 | | | 0.0 | 0.00 | 0.00 |

2024 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի (ցրված սկլերոզ) վերաբերյալ վերջնական գներով



| NN | Դեղի անվանումը | Քանակ | «F. Hoffman La Roche AG» գները ԱՄՆ դոլարով 1USD=402.66 ՀՀ դրամ | | | | | «F. Hoffman La Roche AG» գները ՀՀ դրամով 1USD=402.66 ՀՀ դրամ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Ինտերֆերոն բետա 1a 44 մկգ | 3,120 | | | | | | | | | | |
| 2 | Ինտերֆերոն բետա 1b 0,3 մգ | 3,120 | | | | | | | | | | |
| 3 | **Ինտերֆերոն բետա 1a 30 մկգ** | 1,040 | | | | | | | | | | |
| 4 | Դիմեթիլֆումարատ 240 մգ | 43,200 | | | | | | | | | | |
| 5 | Գլատիրամեր ացետատ 40 մգ | 10,950 | | | | 0.00 | 0.00 | | | | | |
| 6 | Օկրելիզումաբ 30մգ/մլ | 480 | 1,160,640.00 | 232,128.0 | 1,392,768.0 | 2,418.00 | 2,901.60 | 467,343,302.40 | 93,468,660.48 | 560,811,962.88 | 973,631.88 | 1,168,358.26 |